

Թ.00.05 ԿՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աստվածաբանություն - Աստվածաբանության առարկան (theologia)՝ քրիստոնեական կրոնի գիտական ուսումնասիրություն և լուսաբանում, սկզբնավորումը /դեռևս 2-րդ դարում, երբ նոր՝ քրիստոնեական դավանանքը պաշտպանելու և ջատագովելու համար ի սպաս դրվեցին հունական, և ոչ միայն հունական, այլև համամարդկային, կրթության գիտական համակարգը և նվաճումները/:

Աստվածաբանության 4 բաժինները՝ 1. մեկնողական (եկզեգետիկ) աստվածաբանություն, 2. պատմական աստվածաբանություն, 3. Սիստեմատիկ աստվածաբանություն և 4. գործնական (պրակտիկ) աստվածաբանություն: Պատմական և գործնական (պրակտիկ) աստվածաբանություն:

Պատմական բնույթ ունեցող աստվածաբանական դիսցիպլիններ, այդ թվում են՝ Հին և Նոր Կտակարանների ներածությունը, դոգմաների պատմությունը, հայրաբանությունը, քրիստոնեական մատենագրության պատմությունը, խորհրդաբանությունը (կամ նշանակաբանությունը՝ սիմվոլիկան), կանոնագիտությունը, տոմարագիտությունը, ծիսակատարության պատմությունը (ծիսագիտությունը), եկեղեցական հնագիտությունը և քրիստոնեական արվեստի պատմությունը: Քրիստոնեական եկեղեցու պատմությունը և մեկնողական (եկզեգետիկ) աստվածաբանությունը:

Հին ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հին Կտակարանի **լեզուն**, կառուցվածքը, **կանոնը**, երկրորդականոն գրքեր: Հին Կտակարանի թարգմանությունները: **Հնգամատյան**. օրենք և պատվիրաններ: Ծննդոց, Ելք, Ղևտացիների, Թվեր, Երկրորդ Օրենք:

Պատմական գրքեր. Հեսու, Դատավորներ, Հռութ, Ա-Դ Թագավորություններ, Ա, Բ Մնացորդաց, Եզրաս Ա, Բ, Նեեմի, Եսթեր, Հուդիթ, Տրիթ, Ա-Գ Մակաբայեցիներ:

Իմաստության գրքեր. Սաղմոսներ, Առակներ, Ժողովող, Իմաստություն Սողոմոնի, Երգ Երգոց, Իմաստություն Սիրաքի, Հոբի գիրք:

Մարգարեական գրքեր. Եսայի, Երեմիա, Դանիել, Եզեկիել (մեծ մարգարեներ), Ովսե, Հովել, Ամովս, Աբդիու, Հովնան, Միքիա, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անգե, Զաքարիա, Մաղաքիա (փոքր մարգարեներ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Արման սրկ., Հին կտակարանյան կանոնը վաղ եկեղեցում, «Էջմիածին», Էջմիածին, 2014,
2. Աճեմեան Շահե արք., Յուդակ Աստուածաշունչ Մատենի հայերէն ձեռագիրներուն, 1992, Լիզպոն,
3. Աստվածաշունչը և հայ մշակույթը, Ներսես ավ. քին. Ներսեսյան, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 2001,
4. Գըլլընճեան Յակոբ եպս., Մեկնութիւն Արարածոց, Մոնտեվիդէօ, 1995,
5. Դարբինյան Գրիգոր, Ներածություն Հին Կտակարանի, Էջմիածին, 2000,
6. Կայայան Ա., Հին Կտակարանի ներածություն, Երևան, 2000,
7. Eissfeldt O., The prophetic literature, The old testament and modern study, ed. by H. H. Rowbey, Oxf., 1961.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր Կտակարանի **լեզուն**, կառուցվածքը, **կանոնը**: Նոր Կտակարանի **ձեռագրերը, թարգմանությունները**: «Համատեսական» (sinoptique) **Ավետարաններ** (Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի): Հովհաննեսի Ավետարան: **Գործք Առաքելոց**:

Պողոսի 14 թղթերի առանձնահատկությունները (Հռոմեացիներին, Ա, Բ Կորնթացիներին, Եփեսացիներին, Փիլիպեցիներին, Կողոսացիներին, Ա, Բ Թեսաղոնիկեցիներին, Ա, Բ Տիմոթեոսին, Տիտոսին, Եբրայեցիներին):

Ընդհանրական (Կաթողիկե) թղթերը (Հակոբոսի, Ա, Բ Պետրոսի, Ա, Բ, Գ Հովհաննեսի, Հուդայի): **Հովհանու Հայտնությունը:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կայայան Ա., Նոր Կտակարանի ընդհանուր ներածություն, Ե., 1996,
2. Պետրոսյան Եզնիկ ծ. վրդ., Ներածություն Նոր Կտակարանի, Էջմիածին, 1996,
3. Սեբուլա Օ. Նոր Կտակարանի գրքերու կարգը հայոց քով, Հ. Ա. 1947, էջ 179-190, 289-299, 347-357, 483-492,
4. Библия, книги Священного Писания Ветхого и Нового Завета, М., 1976,
5. Мецгер Б. М., Канон Нового Завета. Происхождение, развитие, значение. Москва, 1998,
6. Guthrie Donald, New Testament Introduction, England: Apollos, 1990.

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեկնողական ժանրի ձևավորումը և զարգացումը: Մեկնությունը որպես հնագույն ժանր: Անտիկ շրջանի մեկնությունները: Մեկնողական ձևերը և դրանց զարգացումը: Մեկնություններն Աթենքի դպրոցական ծրագրերում: Արիստոտելի դերը մեկնության ժանրի զարգացման գործում: Մեկնողական ձևերի ձևավորումը հելլենիզմի դարաշրջանում (մ. թ. ա. 4 - մ. թ. 1 դդ.): Աղեքսանդրյան առաջին դպրոց: Հրեական շրջանակներում կատարված Հին Կտակարանի մեկնությունները: *Սուրբ Գրքի* մեկնությունը որպես խորհրդի բացահայտում: Փիլոն Աղեքսանդրացին (1-ին դ.) որպես էկսեգետիկ աստվածաբանության հիմնադիրներից մեկը: Փիլոն Աղեքսանդրացու *Սուրբ Գրքի* մեկնությունը, նրա ներդրումը և այլաբանական մեկնության կիրառումը:

Մեկնությունների առաջատար դերը քրիստոնեության տարածումից հետո, հելլենիստական գրականության ճգնաժամի և նոր գրականության ձևավորման շրջանում: Հին և Նոր Կտակարանների “հաշտեցումը” մեկնությունների միջոցով: Քրիստոնեական գրականության առանձնահատուկ, բնորոշ գծերը որպես շարժառիթ ոչ միայն Աստվածաշնչի, այլև “արտաքին գրեանց” բազում մեկնությունների ստեղծման համար: Մեկնությունների մեկնություն:

Մեկնությունները և ուսուցումը: Մեկնությունների առաջնակարգ տեղը կրթական ոլորտում: Մեկնությունները որպես միջնադարյան մտքի ձևավորման կարևորագույն ազդակներ: Միջնադարում մեկնության ժանրի զարգացումը: Մտահայեցողական (սպեկուլյատիվ) գրականության վերելքը: Աքրլաստիկ (դպրոցական, ուսումնական) փիլիսոփայությունը: Մատենագրության բանաքաղաժո ու մեկնողական բնույթը:

“Գիրք Պատճառաց” մեկնությունների հանրագիտարան:

Գրիգոր Աբասյանի “Գիրք Պատճառաց” պայմանական վերնագիրը կրող մեկնությունների անտիպ ժողովածուն: “Գիրք Պատճառաց”-ի իմաստային և քանակային ծավալը և կարևոր տեղեկություններ պարունակող վերնագիրը՝ “Պատճառ լայն եւ նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց եւ ի վարդապետաց, եւ ի մի հաւաքեալ եւ հոգացեալ մեծ ռաբունապետին Գրիգորի, որոյն Աբասայ”: Երկի բովանդակությունը, կազմը, նյութի հերթականությունը: Աստվածաշնչի և “նուրբ” գրվածքների մեկնությունները: “Գիրք Պատճառաց”-ի պահպանված ձեռագրերը: Խաչատուր Կեչառեցու ներդրումն այս գրվածքի ուսումնասիրման գործում. հեղինակային պատկանելության հանգամանքը, Խաչատուր Կեչառեցու կողմից կատարված ուղղումները, ջնջված բառերի լրացումը, անհասկանալի որոշ տեղերի ճշտումը: “Գիրք Պատճառաց”-ի սկզբնական բնագրի հարցը: “Գիրք Պատճառաց”-ի դերը և նշանակությունը Հին և Նոր Կտակարանների մեկնությունների

(ինչպես նաև այլ ոլորտների) ուսումնասիրման գործում: “Նուրբ” և “լայն գրեանք”-ի սահմանումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հին և Նոր Կտակարանների մեկնությունների տեսական մասի համար

1. **Աբրահամյան Ա. Գ.**, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան 1956:
2. **Անասյան Հ.**, Հայկական Մատենագիտություն, Երևան 1959, հտ. Ա, էջ LX-LXIV:
3. **Անթապյան Փ.**, Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, ԲՄ, N15, Երևան 1986, էջ 60-94:
4. **Գաթըրճեան Հ.**, Սրբազան պատարագամատոյցք հայոց, Վիեննա 1922:
5. Գիրք թղթոց, երկրորդ հրատարակութիւն, **Ն. Եպս. Պողարեան**, Երուսաղէմ 1994:
6. Գիրք հերձուածոց, հր. **Տեր-Մկրտչյան**, Վաղարշապատ 1892:
7. Գիրք, որ կոչի **Ջգօն** արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մըծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսատրչին, սակս մանկանց նորոյս Սիովնի, Կոստանդնուպօլիս 1824:
8. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, **Կ. Կոստանեանց**, Ալեքսանդրապօլ 1910:
9. **Ջարպիանալեան Գ.**, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ 1883:
10. **Շիրինյան Մ.**, Արտաքին և նուրբ գրեանք, *Աշտարակ Բ, Հայագիտական պարբերագիրք*, Բ, Երևան 1998, էջ 15-45:
11. **Շիրինյան Մ. Է.**, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, *Աշտարակ Գ, Հայագիտական պարբերագիրք*, Երևան 2000, էջ 36-64:
12. **Շիրինյան Մ. Է.**, “Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը. հայկական և հունական՝ դասական և բյուզանդական, աղբյուրների բաղդատությամբ”, Երևան 2005
13. **М. Тер-Мовсесян**, История перевода Библии, С-Петербург 1902.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. “Գիրք Պատճառաց”՝ Մաշտոցի անվան Մատենադարան, թիվ 1879:
2. Թուղթ երանելոյն Պօղոսի Տարօնացոյ Յաղթող Ախոյեան Վարդապետի. Ընդդէմ Թէոփիստէ հոռոմ Փիլիսոփային, Կ. Պոլիս 1752:
3. Terian A., Armenology without Theology? Issues in the Study of early Armenian Philosophy, Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները, Երևան 2004 թ., էջ 271-272 [Armenian Studies Today and Development Perspectives, Erevan 2004 p. 271-272].
4. Thomson R. W., Aspects of Medieval Armenian Exegesis, New Approaches to Medieval Armenian Language and Literature, Amsterdam-Atlanta, GA 1995, pp. 47-61.
5. Thomson R. W., *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 A.D.* (Corpus Christianorum), Turnhout: Brepols 1995.

ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Գրերի գյուտ: Գրերի գյուտը և դրա դերն ու նշանակությունը: Սբ. Մեսրոպ Մաշտոցի հեղինակած շարականները, «Հաճախապատում Ճառերի» հեղինակային պատկանելության հարցը: Սբ. Սահակ Պարթևի հեղինակած շարականները, կանոնախմբերը և ծիսական կանոնները Մաշտոց-ում: Մաշտոց ծիսամատյանի կազմումը:

Սահակ Մաշտոցյան աշակերտների հեղինակած գործերը: Կորյուն. «Վարք Մաշտոցի»: Եղշիե. «Վարդանի կր հայոց պատերազմի մասին», Խրատներ, «Հայր մեր»ի մեկնություն: Եզնիկ Կողբացի. «Եղձ աղանդոց», Խրատներ և այլ մանր երկեր: Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորանցու Պատմագրքերը:

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՉԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը. թարգմանության փուլերը, բնագրերը:

Ճառերի և Աստվածաշնչային գրքերի մեկնությունների հայերեն թարգմանությունը (Ս. Հովհան Ոսկեբերանի, Ս. Աթանաս Ալեքսանդրացու, Ս. Բարսեղ Կեսարացու, Եվագրիոս Պոնտացու, Կյուրեղ Ալեքսանդրացու: Եփրեմ Խուրի Ասորի): **Սրբախոսական երկեր:**

Ծիսական մատյանների թարգմանություն. Պատարագամատուցյներ, Մաշտոցի տարբեր կանոններ:

Ջատագովական և հակաճառական գրականության թարգմանություն. (Կյուրեղ Երուսաղեմացու Կոչումն ընծայութեան, Իրինեոս Լուզոնացու «Ցոյցք առաքելական քարոզութեան», «Ընդդէմ հերձուածոց», Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն»):

Պատմագրական երկեր. Եվսեբիոս Կեսարացու (+339թ.) «Ժամանակագրութիւնը» («Քրոնիկոնը»), Սկրատ Աքրլաստիկոսի «Եկեղեցական պատմությունը»,

Կանոնական գրականություն. Առաքելական, Կղեմեսի, և «Հարանց հետևողաց» կանոնախմբեր, առաջին երեք տիեզերաժողովների՝ Նիկիայի, Կ. Պոլսի (Ա) և Եփեսոսի որոշումները, տեղական վեց ժողովների՝ Անկյուրիայի Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լաոդիկեի և Սարդիկեի կանոնախմբերը, ինչպես նաև՝ Ս. Աթանաս Ալեքսանդրացու, Ս. Բարսեղ Կեսարացու և Սևանտոսի կանոնախմբերը:

ՍԲ. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակային պատկանելության հարցը: Բովանդակության հիմնական գծերը՝ Երրորդաբանություն, Մարդեղության խորհուրդը, Առաքելական քարոզչության, Վախճանաբանական հայացքներ:

ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԵՐ

Հեղինակային պատկանելության հարցը: Ճառերի քանակը:
Բովանդակությունները: Դավանանքին վերաբերող ճառերը:
Վանականներին վերաբերող ճառը:

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ՃԱՌԵՐԸ

Անհամաձայնություններ հեղինակային պատկանելության մասին: Ճառերի քանակը: Բովանդակությունները: Բարոյախրատական ճառեր:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՂՈԹԱԳԻՐՔԸ

Նարեկա վանքի հիմնադրումը: Գրիգոր Նարեկացու կյանքը: Ստեղծագործությունները. «Երգ երգոցի մեկնություն», Գանձեր և տաղեր, «Պատմություն Ապարանից Աբ. Խաչի», ևն: «Մատյան Ողբերգություն» աղոթագրքի գլուխների քանակը, բովանդակության հիմնական գծերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, 1959, հտ. Բ, 1976:
2. **Զամինյան Աբ.**, Հայ գրականության պատմություն, Ա մաս, Նոր-Նախիջևան, 1914:
3. **Զարբհանյան Գ.**, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, Գ տպ. 1897, Դ տպ. 1932:
4. **Զարբհանյան Գ.**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ), Վենետիկ, 1889:
5. **Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան**, Երևան, 2002.

ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
Նախնադարյան (վաղնջական) **հավատալիքներ** (տարրապաշտություն, երկնքի պաշտամունք, բուսապաշտություն և կենդանապաշտություն, կախարհություն, շամանականություն, ծիսական գործողություն, ոգեպաշտություն, նախնիների պաշտամունք և այլն): Հայ և օտար պատմագիրների

տեղեկությունները Հայաստանում տարածում գտած վաղնջական հավատալիքների մասին:

Դիցաբանությունն իբրև աշխարհճանաչողություն և աշխարհընկալում: Կրոնի, փիլիսոփայության, գիտության և արվեստի տարրերի յուրահատուկ համադրումը դիցարաններում: **Դիցաբանական մտածողություն, երևակայություն և տրամաբանություն: Սիմվոլիզմն** իբրև՝ դիցաբանական համակարգերի առանցք: Դիցաբանություն և մշակույթ:

Դիցաբանական համակարգերի ուսումնասիրության մեթոդները, հիմնական սկզբունքները և դպրոցները:

Դիցաբանական համակարգերի ձևավորման բնութագրիչ տարրերի և զարգացման օրինաչափությունները: Հանդերձյալ աշխարհի, հոգու անմահության պատկերացումները: Տարամետ աստվածությունների աստիճանական համադրման միտումները: Մարդաբանացման գիծը դիցարաններում: **Դիցաբանական համակարգերի բարեշրջումը՝** պոլիթեիզմ, էնթեթիզմ, մոնոլատրիա, սուպրեմոնոթեթիզմ: **Սինկրետիզմը** դիցաբանական համակարգերում: Դիցաբանական շերտերի հաջորդականության հիմնահարցը:

Զրադաշտություն: Արիական և հնդիրանական կրոնադիցաբանական հնագույն հավատալիքները և զրադաշտության ձևավորման ակունքները: Զրադաշտի մասին ավանդությունը: **Ավեստան իբրև Զրադաշտության սրբազան մատյան,** առնչությունները Ռիգվեդայի հետ:

Յոթ աստվածությունների և յոթ արարչագործությունների մասին զրադաշտական ուսմունքը: Արարչագործության և երեք դարաշրջանների, բարու և չարի մասին ուսմունքները: Մահվան և հանդերձյալ կյանքի մասին պատկերացումները: Մազդայի պաշտամունքի հաստատումը: **Զրադաշտության դավանանքը և պաշտամունքը:** Տոները, ծեսերը և հոգևոր ծառայությունը: **Փրկչի վերաբերյալ հավատքը:** Մաքրագործման օրենքները: Զրադաշտական քրմական աստիճանակարգը:

Զրադաշտության զարգացումը պարսից պետականությունների (Աքեմենյան, Արշակունյաց, Սասանյան) շրջանում: **Զրադաշտությունը իսլամի հաստատումից մինչև մեր օրերը:**

Միհրի պաշտամունքը: Միհրն արիական դիցարանում: Միթրայի վեդայական պատկերացումները: Միթրան և Վարունան իբրև աշխարհակարգի պահպանման հակակշիռները: **Միթրան** իբրև արեգակի և երկնքի պաշտամունքը խորհրդանշող, տիեզերական համապարփակ ուտա օրենքի, մարդկանց միավորող, արդարացիության, գծի պահպանման, հասարակական դաշինքը և ներդաշնակությունը հովանավորող աստվածություն: Միթրան իբրև ճշմարտության և բարոյականության պահապան ու հովանավոր: Զոհաբերություններն իբրև միհրական ծիսակարգի առանցք: **Միթրա, Ագնի և Սոմա:**

Միհրի պաշտամունքային կենտրոնները Հայաստանում: Միհրին ուղեկցող դիցակերպ ուժերը: Միհրի պաշտամունքի կապը աստեղնագարդերկնքի, լուսնային աստվածությունների և ջրային սկզբի հետ: Միհրական կրոնապաշտամունքային համակարգի արտացոլումը «Սասնա ծռեր» ազգային էպոսում:

Միհրականությունն իբրև շերտավորված (իրանական, սեմաբաբելոնական, հելլենական, հռոմեական) **սինկրետիկ կրոն:** Միհրականության ազդեցությունը II-IV դարերի կրոնական համակարգերի վրա:

Արևելյան (Վեդանտա) և Առաջավոր Ասիայի (Շումերական, Աքքադական, Բաբելական, Եգիպտական) ժողովուրդների դիցաբանական համակարգերը: Հունական և հռոմեական դիցաբանությունը:

Հայոց ազգային կրոնի բնութագիրը և հեթանոսական դիցարանը: Հայ հեթանոսական պաշտամունքի կենտրոնները ու սպասավորների դասերը: Տոներն ու ծիսակարգը:

Ազգային կրոնների ծագումը և առանձնահատկությունները:

Մովսիսականության էությունը և բնութագրիչ առանձնահատկությունները: Մովսիսականության պատմական փուլերը: **Մովսիսականության Սուրբ գրականությունը՝** Թանախ, Թորա, Նեբեիմ, Քեթուբիմ: **Հրեական բանավոր օրենքը:** Թալմուդ: **Միշնա** և նրա մեկնությունները: **Գեմարա:** Տիեզերածնության և մարդաբանական տեսությունը:

Թանախի (Հին Կտակարանի) հոգևոր և պատմամշակութային արժեքը: **Օրենք:** **Տասնաբանյա պատվիրաններ** և դրանց հավատքային առանձնահատկությունները:

Սինագոգ և սինագոգիալ պաշտամունք: **Մեսիանականության** ձևավորումը:

Մովսիսականության հիմնական ուղղությունները և հոսանքները: Տոնածիսական համակարգը: Մովսիսականությունն արդի աշխարհում:

Բրահմայականություն: **Բրահմայական դիցարանը:** Բրահմա: Վիշնու: Շիվա: Ենթակա աստվածներ (Ինդրա, Յամա): **Վաղ** (Ինդրա, Յամա, Վարունա, Կուբերա) և **ուշ** (Սոմա, Սուրյա, Ագնի, Վայու) **յուկապալների ուսմունքը:** Բրահմայականության բարեշրջումը՝ **արանյակներ և ուպանիշադներ:**

Ուպանիշադների փիլիսոփայությունը: Կյանքի փուլերի (աշրամա), կենսական սկզբի (ջիվա) և հոգևոր սուբստանցի (պուրուշա) ուսմունքը: Բարձրագույն իրականության, աշխարհակառույցի, կյանքի և մահվան, հասարակություն-տիեզերք, մարդ-աստված հարաբերությունների ուսմունքը: Բարու և չարի հիմնահարցը: **Կարմայի ուսմունքը** և կարմայի օրենքի համընդհանրությունը: Ուպանիշադների փիլիսոփայության զարգացման գլխավոր (սանկիյա, յոգա, վեդանտա) և երկրորդական (նյայա, վայշե-շիկա, միմանսներ) ուղիները:

Հնդկաստանը հինդուիզմի ծագման նախօրեին: Հինդուիստական դիցարանի կրոնական և փիլիսոփայական ակունքները: **Տրիմուրտի:** Հին-

դուխտական պրակտիկա (թանթրիզմ): Մանթրա: Մոգական դիագրամ-
մա և յանթրա:

Բրահմայի պաշտամունքը: Բրահմաններ և բրահմայական պաշտամուն-
քի կենտրոններ: **Շիվայի պաշտամունքը՝** լինգամա և շակտի: **Դուրգի և**
Կալի աստվածուհիների պաշտամունքը: **Վիշնույի պաշտամունքը:**
Հինդուիզմի հիմնական ուղղությունները՝ վիշնուիզմ և շիվաիզմ:

Հինդուիստական էպիկական շարքը: **Ռամայանա:** Ռամա, Սիտա:
Մահաբհարաթ: Աստվածների և հերոսների պայքարը: **Սոմադևա:**

Քրիշնայի պաշտամունքը՝ քրիշնայականություն: «Բհագավատգիտան»
որպես վեդայական գրականության հուշարձան: «Բհագավատգիտայի»
բարոյախոսությունը: Քրիշնան իբրև համահնդկական աստվածություն:
Քրիշնայականության երկու ուղղությունները: Քրիշնա-լի՝ քրիշնայական
միստերիաներ: Քրիշնայականության ծիսակարգն ու սնման օրենքները
(պրասադ):

Հինդուիզմը և իսլամը: Հինդուիզմի ռեֆորմացիան X դարում. Շանքարա:
Ուշ հինդուիստական ռեֆորմացիան՝ Ռամաքրիշնա: Վիվեկանանդայի
հայացքները: Քրիշնայականությունը Ամերիկայում XX դարի II կեսին:
Նրա տարածումն արդի աշխարհում: **Նեոհինդուիզմ:**

Ջայնիզմ և սիկհիզմը Հնդկաստանում: Ուսմունքը և պայքարի արդի
փուլը: պաշտամունքը: Կոնֆուցիականության ձևավորման ժամանակա-
շրջանը: Կոնֆուցիուսի ուսմունքի հիմնական բնութագրիչները: Կոնֆու-
ցիուսի բարոյախոսության էությունը և հասարակական իդեալը: Նախնի-
ների պաշտամունքը և «սյաո» նորմերը: Ընտանիքի և կյանի պաշտամուն-
քը: Շենշի: Կառավարման իդեալը: Կոնֆուցիականության տրանսֆորմա-
ցիան և դպրոցները: Միստիցիզմը կոնֆուցիականության համակարգում:
Կոնֆուցիականության ոչ-ռեֆորմացիոն գաղափարախոսությունն իբրև
պետական դավանանք: Կոնֆուցիականության բարեշրջումը: Նեոկոնֆու-
ցիականություն և նրա հոսանքները:

Լաո Ցզին որպես դառսականության հիմնադիր: Դառսական մոգություն: Դառսականության դավանաբանության հիմնավորումը: Անհատական կյանքի հավերժության և անմահության գաղափարները դառսականության մեջ: Մարդու «ցի» էներգետիկայի մասին դառսական պատկերացումները: Կանոնական ուսմունքը: Դառսական աստվածապետությունը: Բուդդայականության և դառսականության փոխադարձ առնչությունները: **Դառսականությունն իբրև պետական գաղափարաբանություն:** Նախնիների պաշտամունքը դառսականության մեջ:

Վաղ հավատքային շերտի ձևավորման տեսությունները Ճապոնիայում: **Սինտոիզմ** էպիկական զարգացման շրջանը: **Սինտոյական դիցարանը:** Արարչագործության մասին պատկերացումները: **Իծանագի, Իծանամի և Ամատերասու** աստվածների պաշտամունքը: Բնապաշտական հավատալիքները: Սինտոյական աստվածությունների զարգացման դինամիկական և **կայսրերի պաշտամունքի ձևավորումը:** Մեղքի գաղափարը սինտոիզմում:

Բուդդայականության ներթափանցումը Ճապոնիա: **Բուդդայական ու սինտոյական հավատալիքների սինկրետիզմը:** Սինտոիզմի «նոր համադրման փորձը»: Մ. Նորինագան և սինտոիզմի «մաքրագործումը»: «Ճապոնական ինքնատիպ ոգու» մասին ուսմունքը: Սինտոիզմը և XIX դարի ճապոնական ազգայնականությունը: Սինտոիզմը XX դարի առաջին կեսին՝ պետականության պաշտամունքի ձևավորումը: **Սինտոիզմն արդի փուլում:**

ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուդդայականության ակունքները՝ վեդանտա, նյայա, վայշեշիկա, սանկիյա, յոգա: **Բուդդայականության ծագումը՝** Սիդհարթհա Գաուտամա: Բուդդայի քարոզները և դրանց հակադրությունը բրահմայական էզոթերիկ իմաստությանը: «**Չորս ճշմարտությունների**» մասին Բուդ-

դայի ուսմունքը: Փրկության բուդդայական կոնցեպցիան՝«**ութմասնյա ուղի**»: Նյութական աշխարհի մասին ուսմունքը՝ **դհարմա**: Ոգու առաջնաստեղծ հիմքի, բարի և չար ոգիների, հոգու, վերաբնակեցման, վերամարմնավորման (կարմա), հատուցման և փրկության բուդդայական ուսմունքը: **Նիրվանայի** մասին ուսմունքը:

Բուդդայական պաշտամունքը: Հավասարության բուդդայական ուսմունքը: Բուդդայական բարոյականության էությունը և հասարակական ուղղվածությունը: **Պանթեոնը բուդդայականության մեջ:**

Տրիպիտակա և նրա կառուցվածքը: Տրիպիտակայի փալիական կանոնը: Պատալիպուտրայի ժողովը և **բուդդայականության կանոնականացումը** Աշոկա թագավորի օրոք:

Բուդդայականության պառակտումները: **Հինայանա** (թեհրավադա): Բուդդայի մասին ուսմունքը: Փրկության կոնցեպցիան, «Ես»-ի ըմբռնումը և ազատ կամքի մեկնությունը: **Մահայանայի** տարանջատումը՝ Նահարջունա: Դավանաբանական առանձնահատկությունները՝ **բողիսատվայի** ուսմունքը: **Մհադիյամիկի և յոգաչարայի դպրոցները:** Մահայանայի պաշտամունքային և ծիսական առանձնահատկությունները: Մահայանայի պրակտիկան:

Տիբեթական բուդդայականությունը: Ցզոնկաբի ուսմունքը: **Լամայականությունը** և նրա բնորոշ առանձնահատկությունները: Խուբիլգանների և **Դալայ-Լամայի պաշտամունքը:** Հետմահու կյանքի պատկերացումները: «Տասը սև մեղքերի» և «տասը սպիտակ առաքինությունների» ըմբռնումները:

Վաջրայանա: Դավանաբանական և պաշտամունքային-ծիսական առանձնահատկությունները: Վեջրայանական պրակտիկան:

Բողիիդհարման և ձեն (չան) բուդդայականության հիմնադրումը: Մեդիտացիայի և սատորիի ուսմունքը: Ինքնակարգավորման և հոգեբանա-

կան մարզման հրամայականը: Ձեռնի տարածումը Կորեայում և Ճապոնիայում:

XIX դարի բուդդայական ռեֆորմացիան: Բուդդայական թեոսոֆիան և **նեոբուդդայականության** ձևավորումը: Բուդդայականության արդիականացումը՝ Բուդդայի ուսմունքի «գիտական» մեկնությունը: Հոգու անմահության և բարոյական արժեքների նորովի մեկնությունը բուդդայականության մեջ:

XX դարի բուդդայական վերածնունդը: Բուդդայականության քաղաքական դերի աճը: Բուդդայականությունը և ասիական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը:

Բուդդայական «նոր հոսանքների (կրոնների)» ծագումը և հնդկական նորաբուդդայականությունը: Բուդդայական տարասեռ աղանդների միավորման միտումները: Բուդդայականության քարոզչական գործունեության աննախադեպ աճն Արևմուտքում:

Ձեռն բուդդայականությունն արդի աշխարհում:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեության ձևավորման նախադրյալները: Քրիստոնեական եկեղեցու հիմնադրումը:

Վաղ քրիստոնեական համայնքներ և դրանց կազմավորման միտումները: Վաղ քրիստոնեության հալածանքները և դրանց պատճառները: Քրիստոնեությունն իբրև թույլատրելի և պետական կրոն:

Քրիստոնեության դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչը և նրա կառուցվածքը: Նոր Կտակարանի կառուցվածքը և բովանդակությունը: Հիսուս Քրիստոսի քարոզչությունը և բարոյականության ըմբռնումները: Քրիստոնեական Ս. Ավանդություն: **Ս. Երրորդության, Հիսուս Քրիստոսի մարդեղության և Քրիստոսի Աստծու մասին ուսմունքները: Լոգոսի վարդապետությունը:** Քրիստոնեության առաջին

(Նիկեայի 325 թ., Կ. Պոլսի 381 թ.) տիեզերական ժողովները: **Հավատո Հանգանակ:** IV դարի երկրորդ կեսի և V դարի քրիստոսաբանական վիճաբանությունները: Եփեսոսի 431 թ. տիեզերական ժողով:

Ներեկեղեցական հարաբերությունները VI-XI դարերում (միակամության և պատկերամարտական վիճաբանությունները): 1054 թ. **Եկեղեցական մեծ պառակտումը** (սխիզմը), **կաթոլիկության և ուղղափառության տարանջատումը:**

Կաթոլիկություն: Դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները: «Պապական իշխանության տեսություն»: Վանական կյանքի կարգավորումը՝ **ցելիբատ:** Սիմոնեա: Կարդինալական կոլեգիայի հաստատումը և պապական իշխանության հոգևոր և աշխարհիկ դերի բարձրացումը: **Քրիստոնեական արևելքի նկատմամբ նոր քաղաքականությունը:** Հարաբերությունները ֆրանկական կայսրության հետ: Արևելյան Էկզարխության ստեղծումը: «Կայսերական եկեղեցին»: **Ինվեստիտուրայի հիմնահարցը և** հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների հակասությունների սրումը: Ապաշխարության եկեղեցական վարդապետություն և կաթոլիկյան **ինդուլգենցիայի** համակարգը՝ կաթոլիկյան «տաքսա»: **Խաչակրաց արշավանքների կազմակերպման նպատակներ, հոգևոր ու հասարակական հիմքերը:** Խաչակրաց առաջին արշավանքները և խաչակրաց իշխանությունների հաստատումը: Վերաբերմունքն Արևելյան քրիստոնյաների նկատմամբ: Լատինական պատրիարքության հաստատումը: **Խաչակրաց արշավանքների պատմական դերն ու նշանակությունը:**

Պապերի «Աստծո տեղապահ» տիտղոսը: Կարդինալական կոնկլավի հաստատումը: 1184 թ. Վենրոնի ժողովը և **կաթոլիկյան հավատաքննության** հիմնադրումը: Ինոկենտիոս III և «առաքելական լեգատների» հավատաքննության կանոնականացումը և դատավարական համակարգի

հաստատումը: **Առատողաֆե** և տեսակները: «Սուրբ գրասենյակի միաբանություն» և «Դավանաբանական միաբանություն»:

Կաթոլիկ եկեղեցին XIV-XVII դարերում: Դոգմաների զարգացման կաթոլիկյան պրակտիկան: **Վատիկանի I և II ժողովները** և կաթոլիկության հասարակական կողմնորոշումը: Կաթոլիկությունն արդի աշխարհում:

Ուղղափառություն: Արևելաքաղկեդոնական (օրթոդոքս) եկեղեցիների դավանաբանությունը և պաշտամունքը: Դոգմաների զարգացման կաթոլիկյան պրակտիկայի մերժումը: Ուղղափառության «եկեղեցական-դոգմատիկական ավանդությունները»: Վերաբերմունքը տիեզերական և տեղական ժողովների նկատմամբ: Արևելյան ուղղափառ քաղկեդոնական եկեղեցու կառուցվածքային բազմաշերտությունը՝ **ինքնանկախ** (ավտոկեֆալ) **և ինքնավար** (ավտոնոմ) **ուղղափառ եկեղեցիներ:** Դրանց կազմավորման կանոնական սկզբունքները:

Արդի ինքնանկախ (ավտոկեֆալ) և ինքնավար (ավտոնոմ) ուղղափառ եկեղեցիները:

Բողոքական եկեղեցիների ձևավորման հոգևոր և հասարակական հիմքերը, դավանաբանության և պաշտամունքային առանձնահատկությունները: Բողոքականության լիբերալ և արմատական հոսանքները: Վերաբերմունքն Աստվածաշնչի և եկեղեցական Ս. Ավանդությունների նկատմամբ: Բողոքական դոգմատիկայի հիմնական բնութագրիչները՝ **Աստվածաշնչի բացառիկ հեղինակություն, անհատական հավատով փրկվելու և համընդհանուր քահանայազործության սկզբունք:** Երրորդության դոգմայի բողոքական մեկնությունը: Մարդ-Աստված փոխհարաբերության մեկնությունը և փրկագործության ուսմունքը: Հիսուս Քրիստոսի մասին բողոքական ուսմունքի առանձնահատկությունները: Հոգու անմահության բողոքական ըմբռնումները և քավարանի մերժումը: Նախասահմանվածության բողոքական ըմբռնումները: **Բողոքականության պաշտամունքը:** Եկեղեցու և հոգևոր դասի միջնորդ և թարգման դերի

մերժումըԼ Եկեղեցական խորհուրդների նորովի մեկնաբանությունը: Վերաբերմունքը Ս. Մասունքների և սրբապատկերների նկատմամբ: Բողոքական ժամերգություններ:

Բողոքական հիմնական ուղղությունների դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները:

ԻՍԼԱՄ

Արաբական թերակղզին ծագման նախաշեմին: Մինչիսլամական շրջանի արաբական դիցարանը: **Վաղ իսլամի կրոնական և հասարակական-պատմական արմատները:** Մուհամեդի կյանքը քարոզչությունից առաջ: Մուհամեդի քարոզչական գործունեությունը Մեքքայում:

Հիջրան որպես երևույթ իսլամում: Վաղ իսլամի ռազմաքաղաքական պատմությունը: Իսլամական ումմայի (համայնքի) առաջացումը: Իսլամի արաբական բնորոշ գծերի ձևավորման Մեդինայում: Իսլամի ռազմաքաղաքական վերելքը VII դարի 20-ական թվականների վերջերին: Վաղ իսլամի իրավական սկզբունքները: Խալիֆի ընտրության հետ կապված բարդությունները: **Համաարաբական իսլամական ումմայի ստեղծումը: Աբու Բաքր:** Արտաքին քաղաքականության վաղ իսլամական կողմնորոշումները և խալիֆայության աշխարհագրական տարածումը: **Օմար և Օսման խալիֆներ: Ղուրանի խմբագրման հիմնահարցը: Ալի (IV «բարեպաշտ խալիֆ»),** նրա որդիների և ալիականների դերը իսլամի պատմության մեջ:

Ղուրանը որպես իսլամի Ս. Գիրք և իսլամական մշակույթի հիմք: Ղուրանի պայմանական բաժանումը երկու մասերի: **Իսլամի դավանաբանությունը՝** «հավատ» և «կրոնական պարտականություն»: **Իսլամական ավանդություն՝** Սուննա: Հադիսներ և նրանց տարաբաժանումները: **«Ալ-իման»**(հավատք) և **նրա երեք հիմնական տարրերը:** Հավատքի հինգ սյունները և դոգմաները՝ **միաստվածության դավանանք և Մուհա-**

մեղի մարգարեական առաքելության ընդունում: Անհատական և հասարակական աղոթք: Իսլամական աղոթքային ցիկլ և նրա կառուցվածքը: **Իսլամի պաշտամունքային-ծիսական համակարգը:** Ղուրանի ընթերցանություն, աղոթք (աս-սալաթ), թլպատություն, ողորմաճություն, հաջ, ջիհադ և նրա երկու տեսակները: Քաաբի և սուրբ վայրերի պաշտամունքն իսլամում: **Իսլամի տոնածիսական համակարգը:** Հիմնական տոները և իսլամական ուրբաթ: **Իսլամական պահքեր:**

Իսլամի պառակտումները և դրանց կրոնադավանաբանական պատճառները: Սյուննայական և շինայական իսլամի առանձնահատկությունները:

Իսլամական իրավունք: Շարիաթ և նրա հիմնական կատեգորիաները:

Սուֆիզմ (Աս-Թասավուֆ)՝ փիլիսոփայություն և դավանանք:

Խալիֆայության կրոնաքաղաքական կացությունը Օմայական հարստության շրջանում: **Աբասյան հարստության հաստատումը:** Խալիֆայության ներկրոնական պառակտումները: Թուրքական տարրի հաստատումը իսլամական տարածքներում: Օսմանյան նվաճումները:

«**Իսլամական ռեֆորմացիայի**» առանձնահատկությունները: XVIII դարի իսլամական վերածնունդը՝ **պանիսլամիզմ:** **Պանթյուրքիզմի** գաղափարախոսությունն ու պրակտիկան: **Պանարաբիզմ:**

Իսլամն արդի աշխարհում: Իսլամի քաղաքականացումը և կրոնաքաղաքական հոսանքները: **Իսլամականացում** և դրա դրսևորման ձևերը: Իսլամական արամատականություն և նրա քաղաքական դրսևորումները: Իսլամի տարածման միտումներն արդի աշխարհում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական կրոնագիտություն

1. **Ալիշյան Ղ.** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002:
2. **Աստվածաշունչ:**

3. **Քիզանդ Եղիայեան**, Քննական պատմութիւն Սուրբգրական ժամանակներու, գիրք 4, **Ներածութիւն Նոր Կտակարանի**, Անթիլիաս, 1976:
4. **Քիզանդ Եղիայեան**, Քննական պատմութիւն Սուրբգրական ժամանակներու, գիրք 5, **Ներածութիւն Նոր Կտակարանի**, Անթիլիաս, 1976:
5. **Դարբինյան Գ.** Ներածություն Հին Կտակարանի, Ս.Էջմիածին, 2002:
6. **Գուրան**, Սոֆիա, 1929:
7. **Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան**, Երևան, 2002:
8. Алов А. А. Владимиров Н. Г., Осипенко Ф. Г. Мировые религии. М., 1998.
9. Грюнбаум Г. З. Классический ислам. Очерк истории. 600-1258. (пер.с англ.). М., 1988.
10. Ислам (энцикл.словарь). М., 1991.
11. История религии (учебн.под пед. И. Н. Яблокова). Т. 1-2, М., 2002.
12. Карташев А. В. Вселенские соборы. М., 1994.
13. Классики мирового религиоведения. Антология. Т. 1-2, М., 1996.
14. Климович Л. И. Книга о Коране, его происхождении и мифологии. М., 1988.
15. Массе А. Ислам. Очерки истории. М., 1983.
16. Мифы народов мира (энциклопедия в 2-х томах). Т. 1-2, М., 1988.
17. Народы и религии мира. Энциклопедия. М. 1998.с. 674-901.
18. Пилкингтон С. М. Индуизма. М., 1999.
19. Религии мира. Минск, 1994.
20. Религиозные традиции мира. В двух томах. Т. 1-2,М., 1996.
21. Религиоведение: хрестоматия (Авт. – сост. П. И. Костюкович). Минск, 2000.
22. Росс Ф., Хиллс, Т., Великие религии человечества (пер.с англ.). М., 1999.
23. Рукая Максуд. Ислам. М., 1999.
24. Скурат К. Е. История Поместных Православных Церквей. Т. 1-2, М., 1994.
25. Текмин Э. Н. Эрман В. Г. Мифы Древней Индии. М., 1982.
26. Уоллис Б. Египетская религия. Египетская магия, М., 1996.
27. Хисмантулин А. А. Суфизм. СПб, 1999.
28. Тальберг Н. История Христианской Церкви. М.-Нью-Йорк, 1991.

29. Христианство (энцикл.словарь).Т. I, М., 1993, Т. II-III, М., 1995.
30. Эррикер К. Буддизм, М., 2001.
31. Яблокова И. Н. Религиоведение. М., 2000.
32. Encyclopedia of religion and ethics (ed.by James Hastings) V. 1-10, New York, 1961-1967.
33. The Oxford Illustrated History of Christianity (ed.by John McManners), Oxford, New York, 1990.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեությունը Հայաստանում: Հայաստանում քրիստոնեության տարածման հարցի շուրջ: Հայ եկեղեցական ավանդությունը **Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչական գործունեության վերաբերյալ:** Հայ եկեղեցական ավանդության հիմնավորումը քրիստոնեական և ազգային մատենագրության մեջ:

Քարոզչական գործընթացները Հայաստանում 1-ին դարավերջին: Եկեղեցական համայնքների հիմնադրումը և հալածանքների 1-ին դարավերջին: Հայաստանում գործող քրիստոնեական համայնքների կապերն ու հարաբերությունները Ասորիքի, Միջագետքի, Ադիաբենի և Կապադովկիայի եկեղեցական կենտրոնների հետ: Քրիստոնեությունը Փոքր Հայքում 2-3-րդ դարերում: Հայաստանի կենտրոնական եպիսկոպոսության ստեղծումը: Հեթանոսության բարենորոգման Տրդատ Մեծի փորձերը և քրիստոնեության հալածանքները 3-րդ դարավերջին: Քրիստոնեության ազդեցության հետագա ծավալումը Հայաստանում՝ Գրիգոր Լուսավորչի գործունեությունը:

Հայ Առաքելական պետական եկեղեցու կազմավորումը, կառուցվածքը, նվիրապետական հաստատությունը, վարդապետությունը և վերաբերմունքը քրիստոնեության առաջին (Նեիկայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի)

սի, Քաղկեդոնի) տիեզերաժողովների նկատմամբ: Հայ եկեղեցու և մինչքրիստոնեական ազգային մշակույթի առնչությունները:

Տեղական եկեղեցական ժողովներ: Հայ եկեղեցու դավանաբանության և պաշտամունքի մշակումը: Դավանաբանության հիմնական սկզբունքները. «Յաճախապատում ճառք», «Կնիք հաւառոյ», «Գիրք թղթոց»: **Հայ եկեղեցու խորհուրդները:** Պաշտամութային (ծիսական) ժողովածուները: **Տոներն ու ծիսական համակարգը:**

Հայ եկեղեցին Գրիգոր Լուսավորչի հաջորդների ժամանակ: Ներսես Մեծ: Բարենորոգչական գործունեությունը: Դավանաբանական և կանոնական ձեռնարկումները. **Աշտիշատի ժողովը:**

Հայ գրերի գյուտը և «Թարգմանչած շարժումը»: Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև: Աստվածաշնչի և եկեղեցու հայրերի հիմնարար գործերի թարգմանությունը հայերեն: **Ինքնուրույն աստվածաբանական, ջատագովական և դավանաբանական գրականության սկզբնավորումը: Վկայաբանական և Վարքաբանական գրականության ստեղծումը:** Եկեղեցու հայացումը:

Հայ եկեղեցին և V-VI դարերի ազգային-ազատագրական շարժումները: Քարոզչական գործունեությունը հարևան երկրներում: Բյուզանդական եկեղեցու ոտնձգությունները և **Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ձևավորումը:** Աղանդավորական և պատկերամարտական շարժումները և Հայ եկեղեցին: Հայ եկեղեցին արաբական գերիշխանության և Բագրատունյաց արքայատոհմի հաստատման շրջանում: **Հայ Առաքելական եկեղեցին և Ոսկեդարի հայ մշակույթը:**

Հայ եկեղեցու հայրենաշեն գործունեությունը Բագրատունյաց Հայաստանում: Կաթողիկոսական աթոռի հաստատվելը Անիում: Կրոնական հալածանքները Արևմտահայաստանում և հայ-բյուզանդական թղթակցությունը: Հայ եկեղեցու թեմերի աշխարհագրական ծավալումը:

Կրոնական նոր կենտրոնների ու միաբանությունների հիմնադրումը: Վարդապետարանների, վանք-համալսարանների և կրթության ու դպրության այլ կենտրոնների գործունեությունը:

Հայ եկեղեցին բյուզանդական ոտնձգությունների շրջանում: Կաթողիկոսական պառակտումները և Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության հիմնադրումը: **Կաթողիկոսական ընտրության նոր կանոնակարգի ընդունումը 1114 թ.:** Կարմիր վանքի ժողովը: Հայ-ասորական եկեղեցական հարաբերությունները: Հայ-կաթոլիկ եկեղեցիների հարաբերության սկիզբը: Հայ և բյուզանդական եկեղեցիների միության փորձերը: **Հայոց հայրապետական աթոռի հաստատումը Կիլիկիայում:** Ունիթորների և հակաունիթորների պայքարը: Հայ եկեղեցին սելջուկ-թուրքերի արշավանքների շրջանում:

Հայ եկեղեցին Զաքարյան իշխանապետության շրջանում: Հայ վրացական եկեղեցական տարածայնությունները: **Հայ եկեղեցին և X-XIV դարերի ազգային մշակույթը:**

Հայ եկեղեցին թուրքմենական ցեղերի, օսմանյան և պարսկական բռնապետությունների շրջանում: Միաբանության կոթողիկական փորձերի մերժում: **Հայրապետական աթոռի վերադարձը Էջմիածին:** Սսի կաթողիկոսության վերահաստատումը: Կ. Պոլսի պատրիարքության հաստատումը և նրա դերը արևմտահայության հասարակական և մշակութային կյանքում: Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը: Երուսաղեմի պատրիարքության գործունեությունը:

Հայ եկեղեցու դերը գաղութահայության ազգապահպանության գործում: Եկեղեցու միավորող և ազգահավաք գործառույթները: **Հայ եկեղեցին և XV-XVIII դարերի ազգային-ազատագրական շարժումները:** Մխիթարյանների միաբանության հիմնադրումը: **Հայ եկեղեցին և XV-XVIII դարերի հայկական մշակույթը:**

Հայոց կաթողիկոսությունը XIX դարասկզբին: Եկեղեցու դիրքորոշումը ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: **Նեսես Աշտարակեցի:** Ցարական Ռուսաստանը և Հայ եկեղեցին: 1836 թ. մարտի 11-ի Կանոնադրությունը: Եկեղեցու միավորիչ և ազգապահպան դերի բարձրացումը: **Խրիմյան Հայրիկ:** Հայ եկեղեցին և XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային-ազատագրական շարժումները:

Հայ Առաքելական Եկեղեցին XX դարասկզբին: Հայկական բարենորոգումների հարցը և Եկեղեցու դիրքորոշումը: **Հայ եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին:** Հայկական հարցը և Հայ եկեղեցին: **Հայ եկեղեցին հայկական պետականության վերականգնման և ծավալման շրջանում:**

Խորհրդային կարգերը և Հայ Եկեղեցին: «Ազատ եկեղեցական» շարժումը: Բռնադատումները խղճի ազատության և անցյալի հոգևոր ու նյութական արժեքների նկատմամբ: **Խորեն Ա Մուրադբեկյան:** Հոգևոր դասի հալածանքները: Հայ եկեղեցին երկրորդ Աշխարհամարտի տարիներին: **Գրորգ Զ Չորեքչյան:** Հայ Եկեղեցին և սիյուռքահայությունը **Գարեգին Ա Հովսեփյան: Վազգեն Ա Պալճյան:**

Հայ Եկեղեցու արդի վիճակը: Հայ եկեղեցին և էկոմենիկ շարժումը: Հայստանի Հանրապետության «Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին» 1991 թ. հունիսի 17-ի օրենքը և Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունն արդի փուլում: **XIX-XX դարերի ազգային մշակույթը և Հայ Եկեղեցին:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգոր Տաթևացի,** Ոսկեփորիկ, հ. 1-5, Երևան, 1995:
2. **Սրբոյն հօրն մերոյ յերանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք,** Էջմիածին, 1984:
3. **Վարդան Արևելցի,** Ճառք ներբողեանք, Երևան, 2000:

4. **Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի**, Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, Գ հատված:
5. **Կնիք հաւատոյ.....**, Էջմիածին, 1914:
6. **Գիրք թղթոց, Մատենագրութիւն նախնեայց**, Տիխիս, 1901:
7. **Վրթանես Քերթող**, Ընդդէմ պատկերամարտաց, “Էջմիածին”, 1979, Զ-Է, էջ 89-93:
8. **Հովհաննես Օձնեցի**, Երկեր, Երևան 1999:
9. **Գարեգին վրդ. Յովսէփեան**, Խոսարովիկ թարգմանիչ, Էջմիածին, 1899:
10. **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն (Ա-Բ հատվածներ), Երևան, 1983:
11. **Աբել Արք. Մխիթարեան**, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցոյ հանդերձ կանոնագրութեամբք, Էջմիածին, 1878:
12. **Աբր(ահամ) Զամի(նեան)**, Հայոց եկեղեցոյ պատմութիւն, Ա-Բ, Նոր-Նախիջևան, 1908-1909:
13. **Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց**, Հայոց եկեղեցոյ յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908:
14. **Կարապետ Ծ. Վարդ.**, Հայոց եկեղեցոյ պատմութիւն, Ա, Էջմիածին, 1903:
15. **Հայ եկեղեցի. նվիրապետական աթոռներ, թեմեր**, Երևան, Հայկ. հանրագիտ., 2001:
16. **Ներսէս Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, Անթիլիաս, 1974:
17. **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա-Գ, Երևան, 2001:
18. **Մաղաքիա արք. Օրմանեան**, Խոհք եւ խոսք, Երուսաղէմ, 1929:
19. **Մաղաքիա արք. Օրմանյան**, Հայոց եկեղեցին, Երևան, 1992:
20. **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1981, **գիրք առաջին**, գլ. ԻԷ-ԼԵ, ՀԴ-Ը, ԶԶ, ԶԹ-ՂԱ, **գիրք երկրորդ**, գլ. Բ-Գ, ԺԱ, ԺԴ, Ի-ԻԱ, Լ, ԼԲ, ԼԸ-ԼԹ, ԽԷ, ԽԹ, ԾԱ-ԾԴ, ԾԷ-ԿԸ:
21. **Յուսիկ վրդ. Մովսիսեան**, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ պատմութիւն, Էջմիածին, 1884:
22. **Նորայր Արք. Պողարեան**, Ծիսագիտութիւն, Նյու Յորք, 1990:
23. **Նորայր Արք. Պողարեան**, Հայ եկեղեցոյ Հաւատոյ Հանգանակները, Երուսաղէմ, 1993:
24. **Փաւստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, 1987:
25. **Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան**, Ե., Հայկ. հանրագիտ., 2002: